Ք.Երևան 04.06.2025թ.

,,ՍԳԿԿ,, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Արթուր Ապիկյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով ըստ ,,ԳԱՐԱՆՏԵՐՎԻՍ,, ՍՊԸ-ի պարտատեր՝ Կարեն Վերսանդի Հակոբյանի հաղորդման, /այսուհետ՝ դիմումատու/ ,,ԳԱՐԱՆՏԵՐՎԻՍ,, ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Արթուր Ապիկյանի /այսուհետ՝ կառավարիչ/ նկատմամբ, կարգապահական վարույթ հարուցելու և նրա նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին պարզեց, դիմումատուի կողմից դիմում է ուղարկվել ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանի անվամբ, որը վերջինիս կողմից հանձնվել է ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ին:Նշված բողոքը տրամադրվել է հանձնաժողովին և ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ին ներկայացված դիմումի պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի ,,3,,-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 2025թ.-ի մարտի 26-ին և 2025թ.-ի մայիսի 5-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Նախ հարկ է նշել, որ 2025թ.-ի մարտի 26-ին նշանակված նիստը հետաձգվել է դիմումատուի դիմումի հիման վրա, որով վերջինս հանձնաժողովին խնդրել է հետաձգել նշանակված նիստը, իսկ 2025թ.-ի մայիսի 5-ին նշանակված նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը և սնանկության գործով կառավարիչ՝ Արթուր Ապիկյանը: Ինչ վերաբերվում է դիմումատուին, ապա վերջինս նիստին պատշաճ ծանուցված լինելով հանդերձ չի ներկայացել:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Նախ Ա.Սարգսյանը հայտնեց, որ հաղորդման սկանավորված տարբերակը ուղարկվել էն հանձնաժողովի բոլոր անդամներին և կառավարչին և նրանք ծանոթացել են այդ հաղորդմանը:Միաժամանակ Ա.Սարգսյանը հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումատուն նիստին չի ներկայացել, սակայն նիստին ներկայացել է կառավարիչը և վերջինիս կողմից հանձնաժողովին է ներկայացվել առարկություն, ուստի խնդրեց ներկայացնել իրենց կարծիքը, թե նման պայմաններում կարող են շարունակել նիստը թե ոչ, որին հանձնաժողովի բոլոր անդամները հայտնեցին կարծիք նիստը շարունակելու մասին:Այնուհետև Ա.Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը, քանի որ դիմումատուն չի ներկայացել, իսկ կողմերը ծանոթ են հաղորդմանը, ուստի նախ լսել կառավարչի առարկությունները, այնուհետև հարցերի դեպքում դրանք ուղղել կառավարչին, իսկ այնուհետև հանձնաժողովը անցնի կարծիքների արտահայտմանը և այդ կարծիքներից ելնելով, կայացնել որոշում կարգապահական տույժ

կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից, նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Ըստ դիմումատուի կողմից ներկայացված հաղորդման, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 23.1 -րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կառավարիչը պարտավոր է առաջնորդվել վարքագծի հետևյալ կանոններով, մասնավորապես՝ նշված հոդվածի 1-5-րդ մասերում նշված, նույն Օրենքի 27.2-րդ հոդվածի 1-ին և 2րդ մասերի կանոնները համաձայն որի կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցում է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը:

Մանրամասնելով վերը նշված կանոններով կատարված կառավարչի վարքագծի խախտումները, դիմումատուն այդ խախտումները մասնավորեցրել է հետևյալ կերպ.

Որպես անգործություն, սնանկության կառավարիչը պարտավոր էր իրականացնել սնանկության վարույթի կառավարման լիազորությունները ողջամիտ ժամկետներում: Կոնկրետ դեպքում սնանկության կառավարիչը չի կատարել իր վրա դրված պարտականությունները, այն է՝ անգործություն է ցուցաբերել եւ պարտապան ընկերության գույքի գույքագրում, ֆինանսական վերլուծություն եւ օրենքով սահմանված մի շարք այլ աշխատանքներ չի կատարել:

Սնանկության կառավարիչը իր աշխատանքը ոչ արդյունավետ իրականացնելու ժամանակ, պարտապան ընկերությանը հնարավորություն է տվել, որպեսզի վերջինս հաշվապահական եւ այլ փաստաթղթեր «ստեղծի», ինչը արտացոլվում է պարտատերերի վերջնական ցուցակում, մասնավորապես՝ պարտատերերի ցուցակում են հայտնվել պարտապան ընկերության հետ փոխկապակցված անձինք: Այլ կերպ՝ սնանկության կառավարիչը պատշաճ հսկողություն չի իրականացրել պարտապան ընկերության գործունեության նկատմամբ, ինչի հետեւանքով վերջինս թույլ է տվել ՀՀ սնանկության Օրենքի եւ այլ իրավական ակտերի մի շարք նորմերի խախտումներ:

Սնանկության կառավարիչը չի տրամադրել սնանկության վարույթի նյութերը, ինչը խախտում է իր արդար դատաքննության իրավունքը եւ համատեղելի չէ իրավունքի գերակայության սկզբունքին, արդյունքում փսաս է հասցնում իր՝ որպես սնանկության գործով պարտատեր, իրավունքներին եւ օրինական շահերին:

Դիմումատուն նշել է, որ վերջերս իրեն պարզ է դարձել, որ սնանկության կառավարիչը նույնիսկ չունի թղթապանակ, ինչպես նաեւ էլեկտրոնային կրիչ, ուստի՝ այս իմպերատիվ պահանջը չկատարելու համար, ըստ դիմումատուի պետք է հարուցել կարգապահական վարույթ եւ պարզել նրա կոմպետենտ լինելը, քանի որ իր վարքագիծը վտանգի տակ է դնում ողջ սնանկության համայնքի հեղինակությունը: Ըստ դիմումատուի, կառավարիչը չի իրականացրել պարտապան ընկերության գույքագրում: Դիմումատուն իր դիմումով անդրադարձել է նաև սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագրքի 1.22, 1.23, 1.24 և 1.25 կետերին և նշված կետերով սահմանված նորմերը նշել է, որ սնանկության գործով կառավարիչը պարտավոր էր իրականացնել հետեւյալ գործառույթները՝ պարտապանի գույքի առկայությունը պարզելու եւ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցումներ կատարել համապատասխան մարմիններին, կատարել հաշվապահական հաշվետվությունների ստուգման եւ գույքագրման արդյունքում տարբերությունների դեպքում, բացահայտել պատճառները ձեռնարկել միջոցներ գույքի հայտնաբերման անհամապատասխանության վերադարձման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում վերականգնել աշարժ գույքը, փաստաթղթերը, կատարել չափերի եւ բաժանումների ճշգրտումներ եւ իրականացնել հայտնաբերված գույքի պետական գրանցում: Իր հաղորդմամբ դիմումատուն նշել է նույն կանոնագրքի 1.32-րդ կետի կանոնները, որով սնանկության գործով կառավարիչը պարտավոր է նպաստել ,,ՍԳԿԿ,, ԻԿ-ի եւ

կառավարիչների նկատմամբ վստահության ձեւավորմանը եւ հեղինակության բարձրացմանը:

Նշել է նույն կանոնագրքի 1.33-րդ կետի պահանջները, որով կառավարիչը իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, պետք է անկախ լինի, ազատ ազդեցություններից եւ հատկապես այնպիսի ազդեցություններից որոնք կարող են ծագել կառավարչի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից եւ որը կարող է բացասաբար ազդել սնանկության գործի վրա: Նման պայմաններում կառավարիչը պետք է խուսափի իր անկախության թուլացումից եւ ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ,որպեսզի նրանք չհարմարեցնի երրորդ անձանց գոհացնելու համար: Կառավարիչը պարտավոր է նաեւ անկախ լինել պարտապանից:

Դիմումատուի կարծիքով, սնանկության կառավարիչ՝ Արթուր Ապիկյանը պատշաճ չի ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու պարտապանի գույքի պահպանությունը, չի ուսումնասիրել պարտապան ընկերության գույքի առկայությունը, ավելին՝ սնանկության կառավարիչը պատշաճ չի ձեռնարկել միջոցներ՝ պարտապանին պատկանող, սակայն երրորդ անձանց տիրապետության տակ գտնվող գույքը վերադարձնելու ուղղությամբ, մասնավորապես՝ առանց կառավարչին տեղեկացնելու եւ հաշվետու լինելու գործի քննության ընթացքում պարտապան ընկերությունը օտարել է թվով երկու տրանսպորտային միջոցներ, այն է՝ սնանկության կառավարիչ՝ Ա. Ապիկյանը ցուցաբերել է անգործություն օրինակ՝ գույքի պահպանության մի միջոցը չի փոխարինել մեկ այլ միջոցով, ինչի հետեւանքով սնանկության վարույթի մասնակիցներին, հատկապես իրեն, պատճառվել է եւ հնարավոր է պատճառվի գույքային փսաս:

Իր կողմից կազմված հաղորդմամբ, դիմումատուն նշել է, որ սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Ապիկյանը պարտապանի գույքի առկայությունը պարզելու եւ տեղեկատվություն ստանալու նպատակով, անհրաժեշտ ծավալով հարցումներ չի կատարել, իսկ կատարված հարցումների մեջ թերացել է, մասնավորապես՝ ժամանակավոր կառավարիչ հանդիսանալու ժամանակ համապատասխան մարմիններին հարցումներ չի կատարել և ինչի մասին ընդհանրապես տեղեկություն առկա չէ սնանկության վարույթի նյութերում:Միաժամանակ դիմումատուն նշել է, որ սնանկության կառավարիչ՝ Ա.Ապիկյանը իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս չի գործել անկախ, քանի որ հանդիպումներ է ունեցել պարտապան ընկերության հիմնադիր Հրայր Ֆրանսիկի Հակոբյանի հետ եւ դիմումատուն չի բացառում, որ կառավարչի մոտ անձնական հետաքրքրություն է առաջացել, հետեւաբար կառավարչի վարքագիծը անհասկանալի է այն առումով, թե ինչ իրավաչափ նպատակ է հետապնդել պարտապան ընկերության հիմնադրի հետ հանդիպումը և ըստ դիմումատուի նշվածը օբյեկտիվորեն առաջացնում է հիմավոր կասկած կառավարչի շահագրգռվածության վերաբերյալ:

Չնայած նրան, որ իր հաղորդման մեջ դիմումատուն նշում է, որ կառավարիչը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու պարտապանի գույքի պահպանությունը, սակայն նույն հաղորդման մեջ դիմումատուն նշում է, որ կառավարիչը պարտապանի գույքի պահպանումը հանձնել է պարտապան ընկերության տնօրեն՝ Կարեն Գիվիրիզյանին, իսկ այնուհետեւ նույն պարտապան ընկերությունը առանց սնանկության կառավարչին տեղեկացնելու կատարել է ընկերության կառավարման մարմնի փոփոխություն եւ նշանակել է Սարգիսին ով բարեկամական կապեր ունի պարտապան ընկերության հիմնադիր Հրայր Հակոբյանի հետ: Ըստ դիմումատուի նշվածը հայտնի է եղել սնակության գործով կառավարիչ՝ Ա.Ապիկյանին եւ նա գույքի հետագա պահպանման վերաբերյալ որեւէ միջոց չի ձեռնարկել և ըստ դիմումատուի նման վարքագիծ ցուցաբերելու շարժառիթները, նույնպես պետք է պարզվեն կարգապահական վարույթի շրջանակներում:Ըստ դիմումատուի, վերոնշյալ գործողությունները առնվազն անկողմնակալ

դիտորդի մոտ կարող են հիմնավոր կասկած առաջացնել, որ կառավարիչը համագործակցել է պարտապան ընկերության հետ կանխամտածված սնանկության հատկանիշներ ստեղծելու եւ դրանք կյանքի կոչելու հարցում: Այլ կերպ ասած՝ սնանկության կառավարիչ՝ Ա. Ապիկյանը հակառակ գործելով իր մասնագիտական չափորոշիչներին, պարտապան ընկերության հիմնադրին գոհացնելու համար ցուցաբերած վարքագծով թուլացրել է իր անկախությունը, ինչը բացասաբար է ազդել սնանկության ողջ գործի վրա և ըստ դիմումատուի, առկա են կարգապահական վարույթ հարուցելու համար բավարար հիմքեր:Հիմք ընդունելով վերոգրյալը, դիմումատուն հանձնաժողովին խնդրել է «Գարանտսերվիս» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արթուր Ապիկյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ եւ ենթարկել կարգապահական պատասխանատվության ընդհուպ մինչեւ որակավորման դադարեցում:

Հանձնաժողովը իր ծանուցմամբ կառավարչին պարտավորեցվել է մինչև լսումների օրվա նախորդ օրը, հանձնաժողովին ներկայացնել հաղորդման դեմ բերված գրավոր առարկությունները, բացատրությունները, կամ այդպիսին չլինելու դեպքում, կարգապահական խախտումը վերացնելու համար ժամկետ սահմանելու մասին դիմումը, ինչպես նաև այդ առարկությունների հիմքում ընկած բոլոր հիմնավորող ապացույցները:

Կառավարիչ Ա.Ապիկյանի կողմից, հանձնաժողովին է ներկայացվել առարկություն, որը էլ.փոստի միջոցով ուղարկվել է ինչպես հանձնաժողովի անդամներին, այնպես էլ դիմումատուին: Կառավարիչը իր առարկություններում նշել է, որ ծանոթանալով հաղորդմանը գտնում է, որ այն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ:

Կառավարիչը Կարեն Հակոբյանի նշված այն հանգամանքներին, որ նա չի իրականացրել պարտապանի գույքի գույքագրում և ֆինանսական վերլուծություն, առարկությամբ հայտնել է, որ կառավարչի կողմից պարտապանին պատկանող բոլոր գույքերը գույքագրվել են, իսկ ինչ վերաբերվում է կառավարչի կողմից ֆինանսական վերլուծություն չկատարելուն, ֆինանսական վիճակի վերլուծությունը կատարվել է և ներկայացվել է սնանկության դատարանին:

Առարկելով հաջորդ կետով Կարեն Հակոբյանի այն նշածին, որ սնանկության վարույթի բոլոր նյութերը չի տրամադրվել դիմումատուին, նախ նշել է, որ սնանկության գործով կառավարիչը չունի պարտավորություն պարտապանին տրամադրել սնանկության վարույթի նյութերը, այլ պարտապանը կարող է ծանոթանալ նյութերին և/կամ պահանջել տեղեկատվություն սնանկության գործով կառավարիչից/ «Սնանկության մասին» ՀՀ օրենի 19-րդ հոդված 5-րդ մաս/, սակայն Կարեն Հակոբյանի ներկայացուցիչը ծանոթացել է կառավարչի մոտ առկա նյութերին:Ինչ վերաբերվում է հաղորդում ներկայացնողի այն դիտարկմանը, թե իբր կառավարիչը իր աշխատանքը ոչ արդյունավետ իրականացնելու ժամանակ, պարտապան ընկերությանը հնարավորություն է տվել, որպեսզի վերջինիս հաշվապահական և այլ փաստաթղթեր «ստեղծի», ապա կառավարիչը կարծում է, որ այս մասով հասցեատերը ոչ թե «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովն է, այլ ՀՀ գլխավոր դատախազությունը: Ինչ վերաբերվում է հաղորդում ներկայացնողի այն դիտարկմանը, որ կառավարիչը չունի թղթապանակ և էլեկտրոնային կրիչ հայտնել է, որ ինչպես իր բոլոր սնանկության գործերով, այնպես էլ սույն գործով ունի թղթապանակ, իսկ անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային կրիչ:Կառավարիչը իր առարկությամբ նշել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ ապահովելու պարտապանի գույքի պահպանությունը, իսկ ինչ վերաբերվում է դեբիտորական պարտքերը չհավաքագրելուն ապա փաստեմ, որ այդ գործընթացի ուղղությամբ կատարվում են համապատասխան գործողություններ: Ինչ վերաբերում է Հրայն Ֆրանսիկի Հակոբյանի հետ հանդիպելուն, ապա կառավարիչը նշել է, որ վերջինիս սնանկության վարույթով հանդիսանում է պարտատեր և ինքը որպես սնանկության գործով

կառավարիչ որևէ իրավական արգելք չունի նրան հանդիպելու հետ կապված, իսկ ինչ վերաբերվում է, այդ հանդիպման հետ կապված հաղորդում ներկայացնող անձի հետևություններին, ապա ըստ կառավարչի դրանք ենթադրությունների դաշտից են, չունեն իրավական հենք և որևէ աղերս իրականության հետ:

Հրավիրված նիստի ընթացքում, Ա.Ապիկյանը իր առարկությունները պնդեց և կարգապահական հանձնաժողովին խնդրեց հարուցված վարույթը կարճել :

Կարգապահական հանձնաժողովի անդամները որոշ հարցեր ուղղեցին կառավարչին, մասնավորապես կապված պահանջների հաստատման, դիմումատուի կողմից գործի նյութերին ծանոթանալու, թվով երկու մեքենաի վաճառքը առոչինչ ճանաչելու, ֆիանսական վճակի մասին վերլուծություն կատարելու, ինչպես նաև այլ գործողություններ իրականացնելու վերաբերյալ, որին ի պատասխան կառավարիչը մասնավորապես հայտնեց, որ դիմումատուի ներկայացուցիչը ծանոթացել է իր մոտ առկա փաստաթղթերին և հեռախոսի միջոցով կատարել է ֆոտոնկարահանում, ներկայումս առկա է որոշ պարտատերերի մասով հաստատված դատարանի որոշում, իսկ թվով երկու պարտատերերի վերաբերյալ ներկայացվել է վերաքննիչ բողոք և իր կողմից պարտատերերի առաջին ժողովը իրականացվել է չառարկված պարտատերերի հետ:Ինչ վերաբերվում է թվով երկու մեքենաներին, ապա նշված մեքենաներից մեկ ավտոմեքենան արդեն իսկ առանց դատական կարգով այն պահանջելու, վերադարձվել է պարտապանի սնանկության կազմ, իսկ երկրորդ մեքենայի վերաբերյալ ներկայումս քննարկումներ են տարվում նույն ձևով մեքենան ետ վերադարձնելու վերաբերյալ, այն արդյունք չունենալու դեպքում, մեքենան կվերադարձվի դատական կարգով, արի ժամկետները դեռևս կառավարիչը չի անցել:

Այնուհետև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կարգապահական հանձնաժողովի անդամները հարցեր չունեին ուղղելու կառավարչին, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ կառավարիչը նունպես լրացուցիչ հայտարարություններ չուներ, ուստի Ա.Սարգսյանը քվեարկության դրեց հարուցված վարույթը ավարտելու և հանձնաժողովին որոշման գնալու հարցը, որին հանձնաժողովի բոլոր անդամները քվեարկեցին կողմ:

Արթուր Ապիկյանի նկատմամբ կարգապահական տուժ կիրառելու վերաբերյալ կարծիքներ հայտնելու ընթացքում, կարգապահական հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ կառավարիչի կողմից կատարվել են բոլոր օրենքով սահմանված գործողությունները և նրա նկատմամբ չպետք է կիրառել կարգապահական տուժ:Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ համակարծիքի է պարոն Գևորգյանի հետ, քանի որ ըստ կառավարչի կողմից ներկայացված առարկության և տրամադրված ապացույցների կառավարիչը կատարել է բոլոր գործողությունները որոնք գրված էին հաղորդման մեջ:

Հանձնաժողովի անդամ՝ նախագահող Ա.Սարգսյանը նախ հայտնեց, որ ըստ էության դիմումատուն չի ներկայացրել որևիցե մի ապացույցներ իր հաղորդումը հիմնավորելու համար, իսկ բացի այդ Ա.Սարգսյանը հայտնեց, որ կարգապահական վարույթի ընթացքում, ինչպես կառավարիչի բանավոր, այնպես էլ առարկություններում նշված և առարկությանը կից ներկայացված ապացույցներով հայտնի դարձավ, որ կառավարիչը ներկայացրել է հիմնավոր ապացույցներ այն մասին, որ հաղորդման մեջ նշված բոլոր գործողությունները ըստ էության կառավարիչը կատարել է և որևիցե մի հիմք առկա չէ նրան կարգապահական տույժի ենթարկելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական հանձնաժողովը նախ արձանագրում է այն փաստը, որ հանձնաժողովը կարող է անդրադառնալ դիմումում նշված միայն այն հանգամանքներին,

որոնք ապացուցվում են դիմում ներկայացնողի և կառավարչի կողմից ներկայացված փաստաթղթերով, դիմումներով և ապացույցներով: Հանձնաժողովը չի կարող անդրադառնալ այն հանգամանքներին, որոնք հիմված են միայն լոք հայտարարություններով /թեկուզ գրավոր/ և այդ հայտարարությունները կատարված են առանց համապատասխան փաստաթղթային հիմքերի: Նախ հարկ է նշել, որ երբ հանձնաժողովը անդրադառնում է կառավարչի կողմից կատարված սխալ գործողությունների դիտավորությանը, հանձնաժողովը կարող է անդրադառնալ միայն կառավարչի կողմից կատարված այն գործողություններին, որոնք կարող են ակնհայտ ցույց տալ այդ գործողությունները, այլ ոչ թե այն հիմված լինի միայն հայտարարությանը:Կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հստակ արձանագրել, որ դիմումատուն իր հաղորդմանը կից չի տրամադրել իր հաղորդումը հիմավորող ապացույցները, ինչպես նաև չի ներկայացել կարգապահական հանձնաժողովի կողմից հրավիրված նիստին, որպեսզի հիմավորի իր հաղորդման մեջ նշված հանգամանքները: Նման պայմաններում ստացվում է այնպես, որ կարգապահական հանձնաժողովին ներկայացված դիմումը կրում է միայն ձևական բնույթ, կամ նման դիմումը ներկայացվել է որոշակի վախ կամ այլ միջոց կիրառելու կառավարչի նկատմամբ: Թե առաջին և թե երկրորդ դեպքերում էլ, կարգապահական հանձնաժողովը չի հանդիսնում այն կառույցը, որը կարող է կամ պետք է անդրադառնա զուտ առանց փաստաթղթային հիմավորման գրված բողոքին: Դեռ ավելին՝ դիմումատուի կողմից նշված այն հանգամանքները, թե կառավարչի գործողությունները համատեղելի չեն իրավունքի գերակայության սկզբունքին, արդյունքում փսաս է հասցնում իր՝ որպես սնանկության գործով պարտատեր, իրավունքներին եւ օրինական շահերին, հանձնաժողովը արձանագրում է, որ դիմումատուի կողմից իր հաղորդման հետ մեկտեղ չեն ներկայացվել այդ հաղորդումը հիմավորող ապացույցները և դեռ ավելին՝ հենց իր իսկ կողմից ներկայացված հաղորդման հիման վրա, հանձնաժողովի կողմից նշանակված նիստին, դիմումատուն կամ իր ներկայացուցիչները չեն ներկայացել, այսինքն՝ նախ հենց դիմումատուի կողմից չեն պաշտպանվել իր իսկ իրավունքները եւ օրինական շահերը:

Հանձնաժողովը արձանագրում է, որ վերը նշված փաստական հանգամանքները ավելի քան բավարար էր սույն կարգապահական վարույթը կարճելու համար, սակայն քանի որ առկա է բողոք և առկա է կառավարիչի կողմից ներկայացված առարկություն, ուստի հանձնաժողովը սույն կարգապահական վարույթը ավելի օբյեկտիվորեն քննելու և դիմումը և առարկությունները միմիանց հետ համադրելու և կարծիք հայտնելու պատճառով, իրականացրեց կառավարչի կողմից ներկայացված փաստաթղթերի համեմատությունը հաղորդման հետ:

Ուսումնասիրության արդյունքում հայտնի դարձավ այն հանգամանքը, որ ըստ դիմումատուի կողմից ներկայացված հաղորդման, կառավարիչի կողմից դիմումատուին փաստաթղթեր չեն տրամադրվել: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված հարցի կապակցությամբ, օրենսդրական շրջանակներում առկա չեն կարգապահական վարույթի ընթացքում կողմերի կողմից ներկայացվող հիմավորումների ընթացակարգը, ուստի սույն գործի քննման շրջանակներում ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները:Նման պայմաններում ի հիմավորումս իր հաղորդման, դիմումատուն չի ներկայացրել որևիցե մի հիմավորում, որ նա դիմումով դիմել է կառավարչին սակայն վերջինս հրաժարվել է կամ դիմումի տրման պահից, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, դիմումատուին փաստաթղթեր չի տրամադրել:Պետք է հավելել նաև, որ ըստ կառավարիչի բացատրության և տարամդրված նյութերի կառավարչի կողմից տրամադրվել են նյութերը դիմումատուի ներկայացուցիչին և վերջինս կատարել է այդ նյութերի նկարահանում հեռախոսի միջոցով:

Եթե նույնիսկ հիմք ընդունենք դիմումատուի կողմից այն հանգամանքը, որ կառավարիչը իրեն չի ներկայացրել փաստաթղթեր, ապա դիմումատուն ինչպես կարող էր տեղեկանալ այն մասին, թե կառավարիչը չի իրականացրել գույքագրում չի կատարել ֆինանսական վիճակի մասին վերլուծություն, չունի թղթապանակ, կրիչ, գույքի պահպանման հետ կապված փաստաթղթերը և այլն:

Անդրադառնալով կառավարչի գործողություններին, հանձնաժողովը արձանագրում է, որ կառավարչի կողմից իրականում կատարվել է գույքագրման աշխատանքներ, իսկ ինչ վերաբերվում է գույքի պահպանմանը, ապա հենց դիմումատուի հաղորդման մեջ դիմումատուն նշում է, որ կառավարիչը գույքը ի պահ է հանձնել ընկերության տնօրեն՝ Կարեն Գիվիրիզյանին:Չի համապատասխանում նաև իրականությանը դիմումատուի այն պնդումը, թե կառավարչի կողմից չի իրականացվել ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 58-րդ հոդվածով նախատեսված պահանջները, սակայն ըստ կառավարիչի կողմից ներկայացված նյութերի, կառավարչի կողմից իրականում իրականացվել են ֆինանսական վիճակի մասին վերլուծություն, որը 10.01.2025թ.-ին ներկայացվել է դատարանին:Հանձնաժողովը չի անդրադառնում այն հանգամանքին, թե կառավարիչը չունի թղթապանակ և կրիչ մի պարզ պատճառով, որ նման հանգամանքը պարզել կամ հաստատել հնարավոր չէ:

Ինչ վերաբերվում է հաղորդման մեջ նշված այն հանգամանքներին, որ իբրև թե սնանկության կառավարիչը իր աշխատանքը ոչ արդյունաւվետ իրականացնելու ժամանակ, պարտապան ընկերությանը հնարավորություն է տվել, որպեսզի վերջինս հաշվապահական եւ այլ փաստաթղթեր «ստեղծի», կամ Ա.Ապիկյանը իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս չի գործել անկախ, քանի որ հանդիպումներ է ունեցել պարտապան ընկերության հիմնադիր Հրայր Ֆրանսիկի Հակոբյանի հետ եւ դիմումատուն չի բացառում, որ կառավարչի մոտ անձնական հետաքրքրություն է առաջացել և Կարեն Գիվիրիզյանը բարեկամական կապեր ունի պարտապան ընկերության հիմնադիր Հրայր Հակոբյանի հետ և ըստ դիմումատուի նշվածը հայտնի է եղել սնակության գործով կառավարիչ՝ Ա.Ապիկյանին եւ նա գույքի հետագա պահպանման վերաբերյալ որեւէ միջոց չի ձեռնարկել, հանձնաժողովը արձանագրում է, որ հանձնաժողովը չի կարող անդրադառնալ անձնական կամ ենթադրյալ հանգամանքներին, որոնք ապացուցված չեն փաստաթղթերով:

Հիմք ընդունելով սույն եզրակացության մեջ նշված հանգամանքները և ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ բացակայում են կարգապահական խախտման հիմքերը և հատկանիշները, ինչպես նաև այն փաստը, որ կառավարչի կողմից առկա չէ այնպիսի գործողություն, որը կարող է բերել վերջինիս նկատմամբ կարգապահական տույժի կիրառմանը, ինչով պայմանավորված կառավարիչ՝ Արթուր Ապիկյան նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կից կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ 157 թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան